# ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

## Բաց նամակ մինիստր նախագահ Քաջազնունուն

Վսեմաշուք տեր.

Կյանքիս մեջ բնավ մինիստրի հետ խոսած չունեի, այդ պատճառով Ձեզ ներկայանալուս այն վախն ունեցա, ինչ որ ունեցած էր Մովսեսը Փարավոնի առջև ելած պահուն:

Ձեզի կուգայինք խոսելու արևմտահայ դպրոցի թշվառ ու անոր ուսուցչության թշվառագույն վիճակի մասին:

Լսած ըլլալով, որ կառավարությունը չի բարեհաճած հաստատել մեր դպրոցներու նախահաշիվը, ուզեցինք գիտնալ նախ՝ ճի՞շտ է այդ, երկրորդ՝ եթե ճիշտ է՝ ինչու՞ ճիշտ է, քանի որ մեր հազարներու հասնող աշակերտությունը փողոցն է մնացեր՝ անուսում, իսկ հարյուրներու հասնող ուսուցչությունը տունն է մնացեր՝ անոթի:

Դուք ըսիք՝ այո, ճիշտ է, որ ձեր դպրոցները չենք ուզեր բանալ, քանի որ դուք «գնալու եք ձեր երկիրը, ու արդեն իսկ այս րոպեիս սկսել է տաճկահայոց վերադարձը»:

Մենք առարկեցինք, որ այս ձյունին-բուքին անհավանական կթվի վերադարձի որևէ փորձ դեպի անապահով ու անբնակ երկիր մը ու մանավանդ այդ իմաստով հրահանգ չկա պատշաճավոր իշխանութենեն. հիմա գուցե երթան այն հուսահատները, որոնք կուզեն սահմանին այն կողմը մեռնիլ. ու վերջապես ըսինք, եթե նույնիսկ ճշմարիտ է, որ կերթան, խո՞մ կեսը կմնան, կամ կեսին կեսը. բացեք

հինգ դպրոց, կամ երեքը, կամ երկուսը և վերջապես մեկը միայն.

-Ուրեմն դուք կուզեք դպրոցները բանանք, որ տասնյակ մը ուսուցիչներ ամսակա՞ն ստանան, -վրա բերիք դուք այնքան դառն, որպես թե թյուրքահայ ուսուցչի ամսական ստանալը ծանր հանցանք, կամ խիստ ամոթալի բան մը ըլլար:

Երբ առարկեցինք, թե թյուրքահայ ուսուցիչն ալ մարդ է, ան ալ կուզե ապրիլ՝ ըսիք.

-Ապրիլ կուզե, թող երթա իր համար ապրի, կառավարությունն ի՞նչ պարտք ունի ապրեցնելու զանոնք:

Այնուհետև ուզեցինք քանի մը բան ալ առարկել՝ երբ ըսիք. «մի վիճեք» ու անանկ թթու դեմք մը շինեցիք, որը կթարգմանվեր՝ բավական է, գլուխս մի տանեք, գացեք ձեր գործին. ավելի պարզ՝ կորեք այստեղեն:

Հոգ չէ, չենք վիրավորվիր. ես գեթ այն կարծիքին եմ, որ պետություն մը, ինչքան ալ պզտիկ ըլլա, անոր մինիստրը իրավունք պետք է ունենա իր մեկ հպատակին կորիր ըսելու: Խնդիրը հոդ չէ, այլ հոն, որ թյուրքահայ ուսուցչությունը ինչքա՞ն քիչ իրավունք է ունեցեր ապրելու այն կառավարության օրոք, որ «հայկական» կկոչվի:

Հայկական կառավարությունը չի ուզեր պահել չորս ամիս ուսուցչություն մը, որին ռուսական կառավարությունը չորս տարի պահեց.

Վսեմաշո՛ւք Տեր. կհիշե՞ք ասկե երեք տարի առաջ, երբ հայերը դաշնակից պետություններեն ինքնավարություն խնդրելու կպատրաստվեին ու ինքզինքնին հաչս այդ պետությանց կուլտուրական ազգ մը ցուցադրելու համար իրենց բոլորտիքը նայեցան բան մը գտնելու որպես փաստ իրենց կուլտուրականության ու չգտան, մինչև որ Վալերի Բրյուսովը Ռուսաստանեն ելավ եկավ հայերու ունեցած գրական գանձը, Գրիգոր Նարեկացին հանեց ու դրավ իրենց առջև: Կհիշե՞ք որքան ուրախացան հայերը, ինչքան խոսեցին, գրեցին, Հայ գրողներու ընկերության մեջ քննության առին ու վերջն ալ եզրակացուցին՝ այն ազգը, որ

Գրիգոր Նարեկացի ունի, արժանի է ինքնավարության:

Կտեսնա՞ք ազգի մը գրականությունը որքան մեծ արժեք ունի, իսկ ատիկա միայն դպրոցով կըլլա, դպրոցն ալ վարժապետով կըլլա, վարժապետն ալ ամսականով կըլլա:

Իսկ դուք կըսեք.-ես դպրոց բանամ, որ վարժապետները ամսակա՞ն առնեն.

Այն անգամ Նարեկացի մը ունեինք, որ ցույց տվինք ու ինքնավարություն ստացանք. բայց եթե թյուրքահայերը դպրոց չունենան ու երկրորդ Նարեկացի մըն ալ չծնին, դարեր հետո թյուրքերը գան նորեն Հայաստանը տիրեն, չէ՞ որ մենք բան մը չենք կրնար ցույց տալ դաշնակիցներուն՝ ինքնավարություն ստանալու համար.

Վսեմաշո՛ւք Տեր. մեր ուսուցիչները ոչ թե մեկ տասնյակ են, այլ երեսունյոթը տասնյակ, այո, անոնք երեք հարյուր յոթանասուն հոգի են, ողջ բանակ մը, դաս մը:

Այսօր, երբ Ձեր պետությունը օգնության ձեռք կմեկնե կայարանի երկաթուղային ծառայողներուն, անոնց համար խանութ կբանա, որ աժան լուցկի ու պապիրոս առնեն, կօգնե քաղաքի կոոպերատիվներուն, որ իրենց անկման դրութենեն ելնեն, այդ նույն Ձեր պետությունը թող կուտա, որ ողջ դաս մը հայկական գրի ու դպրության մշակներու՝ մեռնի. անոթի: Գուցե, ինչպես շատերեն լսած եմ, դուք ալ ըսեք, թե ձեր վարժապետները անպետք, տգետ են մեծ մասով. բայց ինչ ալ ըլլան, չէ՞ որ ատոնցմե զատ ուրիշները չունինք, որ վաղը վերածնող Հայաստանը երթան ու լուսավորության ճրագները վառեն մեր ետ ինկած գավառներուն ու գյուղերուն մեջ: Անոնք մեր ճրագներն են, մեկ մոմի լույս կուտան, անոնք ձեթի ճրագներն են, աղոտ քիչ մը, բայց այդ ճրագներեն ազատվելու դարմանը զանոնք հանգցնելը չէ, այլ ավելի լուսավորն անոր կողքին վառելն է:

Գարնանը ահա մենք երկիր կերթանք: Կուգա՞ն մեզի հետ ձեր ցենզավոր, համալսարանական ուժերը, ձեր գիմնազիավարտ փափկասուն օրիորդները. կերթա՞ն Սասուն, Մուշ, Ալաշկերտ, Խիզան, Սպարկերտ, Շատախ, Կաճետ լուսավորելու՝ ոչ: Ուրեմն ինչո՞ւ կփչեք մեր ձեթե ճրագները, երբ տեղը

էլեկտրական ճրագներ չեք կախեր: Մենք մութ-մութ ինդո՞ր երթանք մեր երկիրը:

Ժամանակով Լոբանովը ըսեր է՝ Հայաստանը առանց հայերու:

Իսկ դուք հիմա կըսեք՝ Հայաստանը առանց լույսի.

Եղա՞վ: Չէ՞ որ Հայաստանը առաջավոր Ասիայի լուսավորության ջահակիրն ըլլալու պաշտոնն ունի.

Եվ այս բոլորը անոր համար՝ որ կես միլիոնի նախահաշիվ մը չհաստատվի:

Այո՛, կառավարությունը ֆինանսապես կես միլիոն շահեցավ, բայց բարոյապես մեկ ու կես միլիոն կորսնցուց:

Եվ ապագա պատմագիրը պիտի գրե.

«. Երբ Հայաստանի մինիստրության աթոռը բարձրացավ Հովհաննես Քաջազնունին, ռուսահայ դպրոցները բացավ, թյուրքահայոցը՝ գոցեց.»:

Թեև այսպես գրելն ալ քիչ մը սխալ պիտի ըլլա, վասնզի դուք ձեր դպրոցներն ալ չեք բացեր: Նախահաշիվը հաստատեր եք, ուսուցիչները ըստ այդմ ամսական կառնեն, բանալու հրամանը արձակված է, բայց մարդ չկա, որ դռները հրե բանա: Անցած օր Խրիմյան դպրոցի դուռնեն անցածս պահուն՝ տեսա քամին զարկեր դուռը բացեր էր, բայց մարդ չկար մեջը.

Վսեմաշո՛ւք Տեր. թույլ տվեք խոնարհաբար վայ տալու այն կառավարության, որուն դպրոցին դռները քամիները կբանան.

Իսկ գալով ուսուցիչներուն, այդ նույն պատմագիրը այսպես պիտի շարունակե.

«. Այդ նույն մինիստրի օրով՝ ռուսահայ ուսուցիչները ամսական կառնեին կապրեին, իսկ թյուրքահայ ուսուցիչներն անոթի կմեռնեին.»:

Իսկ այդ ուսուցիչներեն շատերը զինվոր էին ամառս ու սահմանը կպաշտպանեին, անոնք հագեր էին սալդաթի լոք-լոք կոշիկներ ու անոնց ոտներուն տակ տաս տեղով «պողոճակ» էր գոյացեր.

Կհիշեմ, երբ 1915-ի հերոսամարտեն ետքը Վանն ազատվեցավ, իշխանությունը դեռ շաբաթ մը հայոց չանցած՝ Կովկասեն պաշտոնացուներու տեղատարափ էր, որ սկսավ տեղալ: Կարևորագույն պաշտոնները «պատրաստի մարդիկ չունենալուս համար» կովկասահայերը բռնեցին, մեզի մնաց միայն գրագրությունն ու դռնապանությունը.

Արդ, Վսեմաշուք Տեր, եթե Դուք որպես հայկական կառավարության գլուխ համահայկական հոգով եք տոգորված, եթե ռուսահայերը ձեր մեկ աչք են, թյուրքահայերը՝ մեկալ, պետք չէ՞ սրտանց ցավիք ապագա Հայաստանի այն խոշոր հատվածին վրա, որ գրագիրներ ու դռնապաններ միայն կրնա տալ.

Ու այս բոլորը, փոքրիկ գումարի մը համար.

Գումար մը, որ եթե Պոլիս ու Եվրոպա գացող ձեր պատվիրակները շաբաթ մը չածիլվեին՝ պիտի գոյանար:

Հետո ալ կելնեք կըսեք՝ եղբայրներ ենք:

Այո՛, եղբայրներ՝ բայց լայն օրերու համար:

Երբ ռուս կառավարությունը Աստված իր տունը շեն պահե առատ-առատ դրամ կհոսցներ մեզի համար, կուգայիք ամսականով մեզի «բարեգործություն», «եղբայրական օգնություն», «լիազորություն» կընեիք, իսկ հիմա որ կըսենք մեր վարժապետները սովամահութենե ազատեցեք մինչև քանի մը ամսեն Երկիր երթանք, դուք մեզի Բարդողյան ձյունապատ լեռնաշղթան կցուցնեք.

-Ամսականո՞վ եղբայրներ.

Ու քանի որ Ձեր կառավարության կեսը «սոցիալիստներե» կբաղկանա, որոնք ութժամյա բանվորական օրը կդավանեն՝ կըսեմ.

-Ութժամյա՛ եղբայրներ.

Մինչդեռ մե՞նք: Տեսեք ի՞նչ կըսե Երևանի առաջնորդական փոխանորդ ու թյուրքահայ դպրոցներու հոգաբարձու Խորեն եպիսկոպոսը.

-Շնորհիվ թյուրքահայ գաղթականների, ռուսահայ այնպիսի գյուղերում դպրոցներ բացվեցան, որոնք իրենց օրումը չէին տեսել.

Այսպես կըսե ձեր եպիսկոպոսը մեր մասին:

Վերջապես, Վսեմաշո՛ւք Տեր, ի՞նչ երկարցնեմ, սաստիկ բարկացած եմ Ձեր այդ եսասեր կարգադրությանը դեմ, ու եթե ինձպես մարդ մը իրավունք ունենար բարկանալու մինիստրի մը վրա՝ պիտի բարկանայի.

Մնամ խորին հարգանոք՝ Լեո Կամսար

1919թ հունվ.17, Երևան